ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՔԱՂԱՔ ԱԲՈՎՅԱՆ

ԱԲՈՎՅԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 հոկտեմբերի 2012 թվականի N 47-Ա

ԱԲՈՎՅԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ԱՆՎԱՆԱՑԱՆԿՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԴԻՄԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետի, հիմք ընդունելով «Ներքին աուդիտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի օգոստոսի 11-ի N 1233-Ն որոշման, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 23-ի N 165-Ն հրամանի պահանջները, Աբովյանի քաղաքային համայնքի ավագանին *ո ր ո շ ու մ է՝*

1. Դիմել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարություն՝ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի 2006 թվականի նոյեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյանի քաղաքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկը հաստատելու մասին» N 38-Ա հրամանով հաստատված անվանացանկում համայնքային ծառայության առաջատար պաշտոնների խմբի առաջին ենթախմբում նոր՝ 9-րդ կետ (Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյանի քաղաքապետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի պետ) և համայնքային ծառայության կրտսեր պաշտոնների խմբի առաջին ենթախմբում նոր՝ 9-րդ կետ (Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյանի քաղաքապետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի առաջատար մասնագետ) ավելացնելու համար:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -11

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԳԵՂԱՄ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐՏՅՈՄ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԳԵՎՈՐԳ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԷԴԳԱՐ
ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍԻՄԱԿ
ՓԱՆՈՍՅԱՆ ԳԵՎՈՐԳ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՍԵՐՅԱՆ
ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՐԹՈՒՐ
ԺԱՄՀԱՐՅԱՆ ԼԵՎՈՆ
ՄԱՐԳԱՐՅԱՆ ԲԱԳՐԱՏ
ԲԱԲԱՅԱՆ ՏԻԳՐԱՆ

Դեմ -0
Ձեռնպահ -0

Քաղաքապետ Կ. Գալոյան

2012թ. հոկտեմբերի 09
ք. Աբովյան